Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

27-33.1-Ղ3-1 Վարչության պետ(2023-11-28)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

Ներքին գործերի նախարարություն | Ռազմավարական պլանավորման, քաղաքականության մշակման և մոնիթորինգի վարչություն | Վարչության պետ, (27-33.1-Ղ3-1)

1.2 Ենթակա և հաշվետու է

Վարչության պետն անմիջական ենթակա և հաշվետու է Ներքին գործերի նախարարին:

1.3 Ենթակա և հաշվետու պաշտոններ

Վարչության պետին անմիջական ենթակա և հաշվետու են Վարչության պետի տեղակալները և Վարչության բաժինների պետերը:

1.4 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Վարչության պետի տեղակալներից մեկը կամ Վարչության բաժինների պետերից մեկը:

1.5 Աշխատավայր

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Նալբանդյան փ. 130:

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. կազմակերպում է հասարակական անվտանգության ապահովման, հանցավորության դեմ պայքարի, աղետների ռիսկի, ճգնաժամային այլ իրավիճակների կառավարման, միգրացիայի, քաղաքացիության և դրանց առնչվող՝ Նախարարության իրավասության շրջանակներում այլ ոլորտների քաղաքականության մշակումը ու դրանց իրականացման նկատմամբ վերահսկողությունը, ինչպես նաև ռազմավարական պլանավորման աշխատանքները.
2. կազմակերպում է հավաքագրված տեղեկությունների հիման վրա հանցավորության դեմ պայքարի, աղետների ռիսկի, ճգնաժամային այլ իրավիճակների կառավարման, միգրացիայի, քաղաքացիության և դրանց առնչվող՝ Նախարարության իրավասության շրջանակներում այլ ոլորտների քաղաքականության արդյունավետության համալիր վերլուծության իրականացման, ինչպես նաև քրեածին իրավիճակի կանխատեսման աշխատանքները.
3. կազմակերպում է վերլուծությունների և կանխատեսումների արդյունքներով առկա մարտահրավերների ու ռիսկերի վերհանումը, դրանց չեզոքացման, ինչպես նաև օպերատիվ իրավիճակի բարելավման, աղետներին դիմակայուն պետության ձևավորման ու կայացման, միգրացիայի, քաղաքացիության ոլորտներում իրականացվող աշխատանքների բարելավման ուղղությամբ առաջարկությունների ներկայացման աշխատանքները.
4. կազմակերպում է անդրազգային և կազմակերպված հանցավորության տենդենցների ու դրսևորումների ուսումնասիրման, վերլուծության, դրանց հակազդման և զսպման արդյունավետ մեխանիզմների ու ինստիտուցիոնալ կարողությունների ձևավորման համար առաջարկությունների ներկայացման աշխատանքները.
5. կազմակերպում է համաշխարհային միգրացիոն տենդենցների ու դրսևորումների ուսումնասիրման, վերլուծության, Հայաստանի Հանրապետությանը սպառնացող միգրացիոն ռիսկերի չեզոքացման և դրանց արդյունավետ կառավարման մեխանիզմների ու ինստիտուցիոնալ կարողությունների ձևավորման համար առաջարկությունների ներկայացման աշխատանքները.
6. կազմակերպում է հանցագործություններ և այլ իրավախախտումներ ծնող պատճառների և պայմանների վերհանման աշխատանքները.
7. կազմակերպում է ոստիկանության ստորաբաժանումները (թմրամիջոցների ապօրինի շրջանառության, թրաֆիքինգի, կիբերհանցավորության դեմ պայքարի և այլն) քրեաբանական ուսումնասիրությունների, ինչպես նաև փրկարար ծառայության ստորաբաժանումների գործառույթների արդյունավետ իրականացման համար նախատեսված անհրաժեշտ ծրագրային համակարգերով, միջազգային պրակտիկայում կիրառվող այլ թվային տեխնոլոգիաներով հագեցնելու նպատակով անհրաժեշտ ուսումնասիրությունների իրականացումն ու առաջարկությունների ներկայացման աշխատանքները.
8. կազմակերպում է միգրացիայի և քաղաքացիության ծառայության կառուցվածքային ստորաբաժանումները քաղաքացիներին որակյալ ծառայությունների մատուցման համար ծրագրային համակարգերով, միջազգային պրակտիկայում կիրառվող այլ թվային տեխնոլոգիաներով հագեցնելու նպատակով անհրաժեշտ ուսումնասիրությունների իրականացումն ու առաջարկությունների ներկայացումը.
9. կազմակերպում է հասարակական անվտանգության, աղետների կառավարման, միգրացիայի և քաղաքացիության ծառայության գործունեության ոլորտների զարգացման ռազմավարությունների մշակումն ապահովելու նպատակով օրենսդրության և միջազգային փորձի ուսումնասիրության ու վերլուծական աշխատանքները.
10. կազմակերպում է հասարակական անվտանգության, աղետների կառավարման և միգրացիայի և քաղաքացիության ծառայության գործունեության ոլորտների զարգացման ռազմավարությունների մշակման ու դրանց իրականացման նկատմամբ վերահսկողությունը,.
11. կազմակերպում է ՀՀ կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի, այլ ռազմավարական ծրագրերի՝ հասարակական անվտանգության, աղետների կառավարման, միգրացիայի և քաղաքացիության ծառայության գործունեության ոլորտներին առնչվող միջոցառումների մշակման և դրանց իրականացման նկատմամբ վերահսկողությունը.
12. կազմակերպում է ռազմավարական ծրագրերից բխող հասարակական անվտանգության, աղետների ռիսկի և ճգնաժամային այլ իրավիճակների, միգրացիայի և քաղաքացիության ոլորտների միջոցառումների իրականացման շրջանակներում, Նախարարի կամ ոլորտը համակարգող նախարարի տեղակալի հանձնարարությամբ, օրենքների և ենթաօրենսդրական ակտերի մշակումը և իրավասու կառուցվածքային ստորաբաժանմանը ներկայացման աշխատանքները.
13. կազմակերպում է հասարակական անվտանգության, աղետների կառավարման, միգրացիայի և քաղաքացիության ծառայության ոլորտների զարգացմանն ուղղված նոր ծրագրերի և նախաձեռնությունների մշակման և իրականացման աշխատանքներում քաղաքացիական հասարակության ներգրավվածության ապահովման աշխատանքները և ներառական ձևաչափով աշխատանքների կազմակերպումը.
14. կազմակերպում է ոստիկանության, փրկարար ծառայության, միգրացիայի և քաղաքացիության ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների արդյունավետ գործունեության կազմակերպմանը միտված կառավարման և կազմակերպակառուցվածքային նոր մոդելների ու կոնցեպտների վերաբերյալ առաջարկների ներկայացման, նման նախաձեռնությունների ստացման դեպքում՝ դրանց ներդրման նպատակահարմարության վերաբերյալ եզրակացության տրամադրման աշխատանքները.
15. կազմակերպում է հասարակական անվտանգության, աղետների կառավարման, միգրացիայի և քաղաքացիության ծառայության ոլորտներին առնչվող ՀՀ վարչապետի, ՀՀ կառավարության հանձնարարականների, պահանջների ժամանակին և պատշաճ կատարման և կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների ներկայացմման աշխատանքները.

16. կազմակերպում է ստացված օրենքների և ենթաօրենսդրական ակտերի նախագծերի վերաբերյալ դիրքորոշման ներկայացման աշխատանքները՝ Վարչության գործառույթներին վերաբերող մասով.
17. կազմակերպում է ոստիկանության, փրկարար ծառայության և միգրացիայի և քաղաքացիության ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության արդյունավետության պարզման նպատակով ուսումնասիրությունների իրականացման ու կարիքների գնահատման աշխատանքները.
18. կազմակերպում է քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության, բնածին և տեխնածին աղետների ռիսկերի կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման աշխատանքների, արտակարգ իրավիճակների կանխման և հետևանքների վերացման, փրկարարական, վթարային փրկարարական, հրդեհաշիջման աշխատանքների իրականացման վիճակի մասին վիճակագրական, վերլուծական և այլ տեղեկությունների հավաքագրման աշխատանքները.
19. կազմակերպում է միգրացիոն գործընթացների կառավարման, օտարերկրյա քաղաքացիներին, փախստականներին և քաղաքացիություն չունեցող անձանց Հայաստանի Հանրապետությունում օրինական բնակության, գտնվելու իրավունքի, օտարերկրացիների կամավոր վերադարձի և արտաքսման, քաղաքացիություն չունեցող անձի կարգավիճակի որոշման գործընթացի, փախստականի կարգավիճակի ճանաչման և ապաստանի տրամադրման, քաղաքացիության ձեռքբերման, դադարեցման, անձանց փաստաթղթավորման և նույնականացման, բնակչության պետական և ընտրողների ռեգիստրների համակարգերի արդյունավետ գործունեության, հետընդունման (ռեադմիսիայի) գործընթացի կազմակերպման ու համակարգման վիճակի մասին վիճակագրական, վերլուծական և այլ տեղեկությունների հավաքագրման աշխատանքները.
20. կազմակերպում է Վարչության կողմից հավաքագրված հանցավորության շարժընթացի, հանցագործությունների կանխարգելման և բացահայտման, հասարակական կարգի և հասարակական անվտանգության պահպանման, ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման վիճակի մասին վիճակագրական, վերլուծական և այլ տեղեկությունների ամփոփման աշխատանքները.
21. կազմակերպում է աղետներին արդյունավետ արձագանքմանը, վաղ վերականգնմանը և հետաղետային վերականգնմանն ուղղված միջազգային լավագույն փորձի ուսումնասիրումը, այս ուղղությամբ արդյունավետ մեխանիզմների ու ինստիտուցիոնալ կարողությունների ձևավորման համար առաջարկությունների ներկայացման աշխատանքները.
22. կազմակերպում է մոնիթորինգի իրականացման արդյունքում հաշվետվությունների կազմման, ռազմավարական փաստաթղթերում փոփոխություններ կատարելու մասով առաջարկությունների մշակման և ներկայացման.
23. կազմակերպում է հաստատված ռազմավարությունների կատարման արդյունքներով Վարչության ոլորտներին վերաբերող հաշվետվությունների կազմման և ՀՀ վարչապետի աշխատակազմ կամ այլ մարմիններ ներկայացման աշխատանքները.
24. կազմակերպում է հասարակական անվտանգության, աղետների կառավարման, միգրացիայի և քաղաքացիության ծառայության գործունեության ոլորտներին առնչվող մեթոդական ուղեցույցների և ձեռնարկների, չափորոշիչների ու ստանդարտների մշակումը, ինչպես նաև արդյունավետ կառուցվածքի ու կազմակերպական փոփոխությունների վերաբերյալ առաջարկությունների ներկայացման աշխատանքները.
25. կազմակերպում է Նախարարի կամ ոլորտը համակարգող նախարարի տեղակալի հանձնարարությամբ կառավարչական բնույթի հրամանների և ցուցումների նախագծերի նախապատրաստումը և ստորագրման ներկայացումը՝ Վարչության գործառույթներին վերաբերող մասով.
26. կազմակերպում է ֆիզիկական և իրավաբանական անձանց, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին օրենսդրությամբ սահմանված կարգով Վարչության գործառույթներին առնչվող մասով տեղեկությունների տրամադրման աշխատանքները.
27. կազմակերպում է Հայաստանի Հանրապետությունում ապաստանի համակարգի զարգացման, փախստականների իրավունքների առավել արդյունավետ պաշտպանության մեխանիզմների ներդրման նպատակով ուսումնասիրությունների և վերլուծությունների իրականացման ու առաջարկությունների ներկայացման աշխատանքները.
28. կազմակերպում է հաստատված ռազմավարությունների, ՀՀ կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի՝ ոստիկանության, փրկարար ծառայության և միգրացիայի և քաղաքացիության ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարման ընթացքի նկատմամբ մոնիթորինգի իրականացումը, աշխատանքների համակարգումն ու մեթոդական ղեկավարումը, անհրաժեշտ այլ աջակցության ցուցաբերումը.
29. կազմակերպում է մոնիթորինգի նպատակով ոստիկանությունից, փրկարար ծառայությունից և միգրացիայի և քաղաքացիության ծառայությունից անհրաժեշտ տեղեկատվության և կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունների հավաքագրումն ու ուսումնասիրումը:

Իրավունքները.

- ռազմավարական պլանավորման և հեռանկարային ծրագրերի օրակարգի իրագործման նպատակով՝ վարչարարական մեխանիզմների, ընթացակարգերի, գործիքակազմի վերաբերյալ ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն.
- պահանջել և ստանալ ռազմավարական պլանավորման և իրականացման գործիքների ուսումնասիրությունների արդյունքում հավաքագրված տեղեկատվությունը.
- ծանոթանալ հասարակական անվտանգության, արտակարգ իրավիճակների և աղետների ռիսկի կառավարման և միգրացիայի և քաղաքացիության ծառայության ոլորտների ռազմավարության և հեռանկարային զարգացման ծրագրերի մշակման, պլանավորման և դրանց իրագործման համար անհրաժեշտ փաստաթղթերին.
- պահանջել և ստանալ հասարակական անվտանգության, արտակարգ իրավիճակների և աղետների ռիսկի կառավարման և միգրացիայի և քաղաքացիության ծառայության ոլորտների ծրագրերի վերաբերյալ տեղեկատվական բազայի հավաքագրման, մշակման, պահպանման, փոխանակման, միասնական և ստանդարտ ձևաչափերի մշակման և ներդրման համար անհրաժեշտ տեղեկատվություն.
- նախարարությունից, նրան ենթակա պետական մարմիններից նպատակների և խնդիրների ուսումնասիրման և դրանց վերանայման վերաբերյալ առաջարկությունների նպատակով պահանջել և ստանալ հասարակական անվտանգության, արտակարգ իրավիճակների և աղետների ռիսկի կառավարման և միգրացիայի և քաղաքացիության ծառայության ոլորտներին վերաբերող անհրաժեշտ տեղեկատվությունը.
- նախարարությունից, նրան ենթակա պետական մարմիններից պահանջել և ստանալ նյութեր հասարակական անվտանգության, արտակարգ իրավիճակների և աղետների ռիսկի կառավարման և միգրացիայի և քաղաքացիության ծառայության ոլորտների ծրագրերի ռիսկերի վերլուծության, գնահատման, մոնիթորինգի իրականացման, ինչպես նաև ընթացիկ հաշվետվությունների կազմման և վերջնարդյունքների գնահատման աշխատանքների իրականացման նպատակով.
- նախարարությունից, նրան ենթակա պետական մարմիններից պահանջել և ստանալ ծրագրերի ղեկավարման գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերի նախագծերի մշակման վերաբերյալ լրացուցիչ փաստաթղթեր.
- համագործակցել տեղական և միջազգային ընկերությունների հետ՝ ծրագրերի մշակման և իրականացման նպատակով.
- ուսումնասիրել հասարակական անվտանգության, արտակարգ իրավիճակների և աղետների ռիսկի, կառավարման և միգրացիայի և քաղաքացիության ծառայության ոլորտների զարգացման հնարավոր սցենարների և ռազմավարական պլանների միտումները.
- համագործակցել Նախարարության մյուս կառուցվածքային ստորաբաժանումների, Նախարարությանը ենթակա պետական մարմինների և կազմակերպությունների հետ, իսկ առանձին դեպքերում՝ նաև այլ իրավապահ մարմինների հետ.
- մասնավոր հատվածին ներգրավել աղետների ռիսկի կառավարման ոլորտում իրականացվող աշխատանքներին.
- պահանջել և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն հասարակական անվտանգության ապահովման, հանցավորության դեմ պայքարի, արտակարգ իրավիճակների և աղետների ռիսկի կառավարման, միգրացիայի, քաղաքացիության և դրանց առնչվող՝ Նախարարության իրավասության շրջանակներում այլ ոլորտների խնդիրների լուծման նպատակով.
- մասնակցել հասարակական անվտանգության ապահովման, հանցավորության դեմ պայքարի աղետների կառավարման, միգրացիայի և քաղաքացիության ծառայության գործունեության և դրանց առնչվող՝ Նախարարության իրավասության շրջանակներում այլ ոլորտներին առնչվող քննարկումներին, խորհրդակցություններին և այլ աշխատանքային հանդիպումներին.

Պարտականությունները.

- Վարչության կողմից մշակված իրավական ակտերի նախագծերը ներկայացնել համապատասխան կառուցվածքային ստորաբաժանում՝ շահագրգիռ մարմիններ ներկայացնելու նպատակով.
- վերլուծել ռազմավարական պլանավորման իրականացման և ռազմավարական փաստաթղթերի մշակման համար անհրաժեշտ տվյալները, ինչպես նաև մշտադիտարկել և հսկողության իրականացնել այդ փաստաթղթերով նախատեսված միջոցառումների կատարման նկատմամբ.
- սահմանել Նախարարության և նրան ենթակա պետական մարմինների հեռանկարային զարգացման առաջնայնությունները և ռազմավարական հիմնական ուղղությունները.

- վերահսկել հաստատված ռազմավարությունների կատարման արդյունքներով կազմված Վարչության ոլորտներին վերաբերող հաշվետվությունները վերլուծման և ամփոփման աշխատանքները և ներկայացնել ՀՀ վարչապետի աշխատակազմ կամ այլ մարմիններ.
- վերահսկել մոնիթորինգի նպատակով ոստիկանությունից, փրկարար ծառայությունից, միգրացիայի և քաղաքացիության ծառայության կառուցվածքային ստորաբաժանումներից ստացված անհրաժեշտ տեղեկատվության և կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները.
- վերահսկել ֆիզիկական և իրավաբանական անձանց, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին օրենսդրությամբ սահմանված կարգով Վարչության գործառույթներին առնչվող մասով տեղեկությունների տրամադրման աշխատանքները.
- կատարել հասարակական անվտանգության, արտակարգ իրավիճակների, միգրացիայի և քաղաքացիության ծառայության ոլորտներում ռիսկերի գնահատման և նվազեցման ուղղությամբ ռազմավարական վերլուծություն, հնարավոր այլընտրանքների գնահատում.
- մշտադիտարկել ՀՀ կառավարության գործունեության միջոցառումների ծրագրի՝ ոստիկանության, փրկարար ծառայության, միգրացիայի և քաղաքացիության ծառայության կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարման ընթացքի նկատմամբ հաստատված ռազմավարությունները.
- վերահսկել Նախարարության և նրան ենթակա պետական մարմինների համապատասխան ստորաբաժանումների ներգրավմամբ հասարակական անվտանգության, արտակարգ իրավիճակների և աղետների ռիսկի, կառավարման և միգրացիայի և քաղաքացիության ծառայության ոլորտների զարգացմանն ուղղված նպատակային ծրագրերի մշակման աշխատանքները.
- վերահսկել օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները, ներկայացնել առաջարկություններ հասարակական անվտանգության, արտակարգ իրավիճակների և աղետների ռիսկի, կառավարման և միգրացիայի և քաղաքացիության ծառայության ոլորտների զարգացման նպատակով.
- վերահսկել սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման աշխատանքները՝ արտակարգ իրավիճակների ոլորտին առնչվող հարցերով.
- վերահսկել Վարչության կողմից մշակված միգրացիոն գործընթացների պետական կարգավորման ռազմավարությունների և դրանց իրականացումն ապահովող գործողությունների ծրագրերի նախագծերի մշակման աշխատանքները.
- վերահսկել հասարակական անվտանգության, արտակարգ իրավիճակների, միգրացիայի և քաղաքացիության ծառայության ոլորտներում գործունեության ռազմավարական, միջնաժամկետ, տարեկան ծրագրերի և միջոցառումների պլանավորման աշխատանքները.
- վերահսկել հասարակական անվտանգության, արտակարգ իրավիճակների և աղետների ռիսկի, կառավարման և միգրացիայի և քաղաքացիության ծառայության ոլորտների տվյալ բյուջետային տարվա ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում պահանջող ծրագրերի վերաբերյալ համապատասխան ստորաբաժանում առաջարկության ներկայացման աշխատանքները.
- վերահսկել հասարակական անվտանգության, արտակարգ իրավիճակների և աղետների ռիսկի, կառավարման և միգրացիայի և քաղաքացիության ծառայության ոլորտներին վերաբերող տեղեկատվակությունների հավաքագրման, մշակման, պահպանման, փոխանակման, միասնական և ստանդարտ ձևաչափերի մշակման աշխատանքները.
- վերլուծել հասարակական անվտանգության, աղետների ռիսկի կառավարման, միգրացիայի և քաղաքացիության ծառայության ոլորտներում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ տարվող մոնիթորինգային աշխատանքները.
- վերահսկել հասարակական անվտանգության, արտակարգ իրավիճակների, միգրացիայի և քաղաքացիության ծառայության ոլորտում միասնական պետական քաղաքականության մշակման և իրականացման աշխատանքները.
- վերահսկել աղետների ռիսկի կառավարման, աղետների հետևանքների նվազեցմանն ու վերացմանն ուղղված ծրագրերը.
- հետևել աղետների կանխարգելման, արձագանքման, հետևանքների վերացման և վերականգնման կարողությունների զարգացման ու հզորացման աշխատանքներին.
- վերահսկել միջազգային համագործակցության ռազմավարության իրականացման աշխատանքները.
- նպաստել օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ փոխշահավետ համագործակցության կապերի հաստատման աշխատանքներին՝ նպատակ ունենալով համատեղ լուծելու բնական և տեխնածին աղետների կանխատեսման, կանխարգելման, հետևանքների վերացման, փրկարարաորոնողական և վերականգնողական խնդիրները.
- վերահսկել հասարակական անվտանգության, արտակարգ իրավիճակների, միգրացիայի և քաղաքացիության ծառայության կառուցվածքային ստորաբաժանումները քաղաքացիներին որակյալ ծառայությունների մատուցման համար ծրագրային համակարգերով, միջազգային պրակտիկայում կիրառվող այլ թվային տեխնոլոգիաներով հագեցնելու նպատակով անհրաժեշտ ուսումնասիրությունները և ներկայացնել առաջարկություններ.
- հսկողություն իրականացնել հասարակական անվտանգության ապահովման, հանցավորության դեմ պայքարի, աղետների ռիսկի, ճգնաժամային այլ իրավիճակների կառավարման, միգրացիայի, քաղաքացիության և դրանց առնչվող՝ Նախարարության իրավասության շրջանակներում այլ ոլորտների քաղաքականության, ոլորտների զարգացման ռազմավարությունների մշակման և դրանց իրականացման նկատմամբ:

---

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

Բարձրագույն կրթություն**:**

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երեք տարվա ստաժ կամ չորս տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ իրավունքի կամ արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության բնագավառում՝ չորս տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Խնդրի լուծում
  - Բարեվարքություն
  - Քաղաքականության վերլուծություն, մոնիթորինգ
  - Որոշումների կայացում
  - Ծրագրերի կառավարում
  - Աշխատակազմի կառավարում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Կառավարում արտակարգ իրավիճակներում
  - Բանակցությունների վարում
  - Փոփոխությունների կառավարում
  - Տարածքային կառավարում
  - Կոնֆլիկտների կառավարում
  - Բողոքների բավարարում
  - Ժամանակի կառավարում

- Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ համապատասխան մարմնի կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների կազմակերպման և ղեկավարման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի մեկ կառուցվածքային ստորաբաժանման գործունեության վրա ազդեցություն և իր լիազորությունների իրականացման արդյունքում այլ անձանց և մարմինների վրա ազդեցություն:

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս պետական մարմինների և կազմակերպությունների ներկայացուցիչների, ինչպես նաև օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ ներկայացնելով համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում, վերլուծում և գնահատում է իր կողմից ղեկավարվող կառուցվածքային ստորաբաժանման խնդիրները և դրանց տալիս լուծումներ: